«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ընթերցանության կարողությունների զարգացում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Կիմա Սարգսյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ներածություն

Ընթերցանություն. խորհրդանիշերի վերծանման բարդ ճանաչողական գործընթաց՝ ուղղված տեքստի հասկանալուն: Լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության և գաղափարների փոխանակման միջոցներից մեկը: Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով: Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում[1]: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ընտրելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ինչպես նաև ընթերցանությունը հնարավորություն է ընկալել, հասկանալ ինֆորմացիան, գրված (փոխանցվող) այս կամ այն միջոցով, վերարտադրել տեխնիկական սարքերով:

Ընթերցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման, համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց:

Ընթերցանության հետապնդած լեզվական խնդիրների մեջ մտնում է նաև աշակերտների բանավոր խոսքի հետևողական զարգացումը, որպես այն հիմքի նախապատրաստում, որի վրա բարձրանալու է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների հոյակապ շենքը՝ բանավոր ու գրավոր կանոնավոր ու անթերի խոսքը, լեզվի քերականության ու տրամաբանության յուրացումը:

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ պետք է փոքրերի համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությունը: Ցավոք, այդ շրջանում առավել հոգ է տարվում տառերի ծանոթացմանը, քան կարդալու տեխնիկայի մշակմանը, մինչդեռ հենց այդ շրջանում է սկիզբ դրվում կարդալու տեխնիկայի մշակմանը: Ուստի պետք է հավասարաչափ հոգ տանել թե՛ տառերին ծանոթանալու և թե՛ կարդալու տեխնիկային տիրապետել տալու մասին:

<u>Աշխատանքի նպատակ</u> - Տարրական դպրոցում ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները (որակական հատկանիշների պահպանմամբ): Անշուշտ, եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց:

<u>Աշխատանքի խնդիր</u> - Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1 Տարրական դպրոցում ընթերցանությանը ներկայացվող պետական չափորոշիչների պահանջները

1-4-րդ դասարաններում մայրենիի դասավանդման գործընթացի բովանդակությունն ու կառուցվածքը պայմանավորված են հանրակրթական տասներկուամյա դպրոցում հայոց լեզվի դասավանդման ընդհանուր խնդիրներ, որոնց լուծումը նպատակաուղղված է դպրոցականների խոսքի և մտածողության զարգացմանը, գաղափարաքաղաքական դաստիարակությանն ու բազմակողմանի, ներդաշնակ զարգացմանը: Բազմաթիվ հետազոտողներ այս ուղղությամբ մշակել են տարբեր տեսություններ, որոնց մոտեցումների մեջ ակնառու է մեկ գլխավոր ուղղություն՝ ուսուցումը պիտի լինի զարգացնող, հակառակ դեպքում այն չի ունենա առաջանցիկ գործառույթներ:

Հանրակրթական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական խնդիրը սովորողների գրագետ, քերականորեն ճիշտ, բովանդակային և արտահայտիչ, հայերենի ուղղագրական, ուղղախոսական կանոններին, գրական հայերենի շեշտադրությանը համապատասխան գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողության ձևավորումն է:

Տարրական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների գերխնդիրներից մեկը նաև աշխարհի մասին երեխաների գիտական հայացքների համակարգի ձևավորումն ու զարգացումն է:

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր դասընթաց, առանձին վերցված ցանկացած դասընթացի յուրաքանչյուր բաժին որոշակիորեն նպաստում են հասարակության, բնության, մարդու մասին տեղեկությունների ձեռք բերմանը: Գիտելիքների այս համալիրությունն էլ հիմք է հանդիսանում սովորողների աշխարհայացքի ձևավորման, դպրացականների անձի զարգացման համար:

Տարրական կրթության համակարգում մայրենիի ուսուցումն ունի յուրահատուկ տեղն ու դերը ոչ միայն նրա համար, որ այն կրտսեր դպրացականների մայրենին է, այլև այն հիմնավոր պատճառով, որ հայոց լեզու և գիտելիքների ձեռքբերման, աշխարհայացքի ձևավորման ամենազոր բանալին է, լեզվամտածողության և ընդհանրապես մտածողության զարգացման

կարևոր գործոններից մեկը: Լեզվի ուսուցման գործընթացի նկատմամբ մոտեցումները բխում են մի քանի հիմնական սկզբունքներից:

1. Լեզվի որպես հասարակական երևույթի էությունը՝ նրա հաղորդակցական աշակերտների գիտակցության դարձնելության մեջ մայրենի լեզվի գործառույթն է: Դպրոցական ուսուցման գործընթացում թե՛ ուսուցիչների, թե՛ ուսումնասիրության առաջնայնության ըմբռնումը հանգեցնում է լեզվի ուսուցման արդյունավետության և նպատակայնության զարգացմանը:

2.Լեզուն և մտածողությունը փոխշաղկապված են և միասնաբար նպաստում են մեկը մյուսի, իսկ երկուսը միասին սովորողների գիտակցության զարգացմանը, նրանց բարձրամակարդակ մտածողության ձևավորմանը:

3.Որքան էլ լեզուն և մտածողությունը հանդես են գալիս միասնաբար, մեզ շրջապատող նյութական իրականության համեմատ դրանք երկրորդական բնույթ են կրում: Մտածողությունը արտաքին աշխարհի արտացոլումն է հասկացությունների մեջ: Բառերը հասկացությունների պայմանական անվանումներն են: Բնականաբար, ինչպես գիտակցության մեջ, այնպես էլ լեզվում, չի կարող լինել այն, ինչ գոյություն չունի շրջակա աշխարհում, ինչ գոյություն ունի մարդկանց գիտակցությունից անկախ:

4.Լեզուն բարդ բազմահամակարգ երևույթ է, որի բոլոր բաղադրամասերը պայմանավորում են միմյանց գործառույթները, դրանով էլ իրականացնում հաղորդակցական գործառույթ:

Այսպիսով, որպեսզի մարդկային հարաբերությունների մեջ գիտակցական տեղ տրվի լեզվի դերին, անհրաժեշտ է ոչ միայն դեռևս տարրական դպրոցում մայրենի լեզվի տարրական դասընթացի միջոցով սովորողների գիտակցությունը հասցնել յուրաքանչյուր լեզվական միավորի արժեքը, այլև լեզվի հաղորդակցական գործառույթի գիտակցումը դարձնել օրախնդիր՝ դասարանից դասարան՝ ավելի ու ավելի հաստատուն: Ընդ որում այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան աշակերտների լեզվական գաղտնիքներին երեխաներին հաղորդակից դարձնելու գործընթացը հետաքրքրություն ներկայացնող գործունեության վերածմամբ:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնառության այս առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են ընթերցանության հետ,

• երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր՝ հիմնական հականիշներով, գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնելով երեխաների բառապաշարը, մշակելով և զարգացնելով երեխաների լեզվական կարողությունները,

• աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին, իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված կարևոր խնդիրները:

1.2 Ընթերցանությունը՝ որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց

Մարդն իր ողջ կյանքի ընթացքում գտնվում է շրջակա միջավայրի հետ մշտական շփման և փոխազդեցության մեջ: Միջավայրի անընդհատ փոփոխությամբ պայմանավորված՝ ծագում են նոր խնդիրներ ու պահանջմունքներ: Եվ ստացվում է այնպես, որ մեր կյանքը կարգավորվում է հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքով, որի մեջ ծանրակշիռ դեր ունեն բարոյական արժեքներն ու չափորոշիչները: Նկատենք, որ բարոյական պատկերացումների ձևավորումը տեղի է ունենում դեռևս մանկական տարիքում և զարգացվում դպրոցում՝ ուսումնառության ընթացքում:

Հայտնի է, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը, և ինչը գրված է գրքում: Այն բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում և դպրոցում ,դառնում են բարոյական համոզմունքներ, որոնք հետագայում ձևավորում են որոշակի վերաբերմունք իր և ուրիշների նկատմամբ:

Այդ խնդրի լուծմանը մեծապես նպաստում է մայրենիի դասն իր կառուցվածքով, որի ընթացքում կարևորվում են նաև դաստիարակչական նպատակները, գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային, ազգային ու համամարդկային արժեքների ձևավորում: Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում բուն դասագործընթացում և արտադասարանային ընթերցանության միջոցով: Գրական ստեղծագործություններին ծանոթանալն ու դրանց ընթերցումները ինքնատիպ միջոց են երեխայի զգացմունքների դաստիարակման համար: Գեղարվեստական

ստեղծագործություններում արտացոլվում է կյանքն իր ամբողջ հարստությամբ և բազմազանությամբ: Դրանք այն մեծ խթանն են, որոնց օգնությամբ երեխան ճանաչում է աշխարհը, նա ձեռք է բերում մարդկայնության, հուզելու ունակություն, ուրիշներին ապրումակցելու, նրանց ուրախությամբ ուրախանալու կարողություններ: Կ.Ի. Չուկովսկու խոսքով՝ գրականությունը կարող է մանկական դյուրընկալ հոգում արթնացնել, դաստիարակել ուրիշի համար տանջվելու, ուրիշի հետ ուրախանալու արժեքավոր ունակություններ, առանց որոնց մարդը մարդ չէ:

Բացահայտելով աշխարհը՝ գրողը օգնում է ընթերցողին տեսնել գեղեցիկը կամ մերժելին, վեհը և ազնիվը: Ունենալով զգացմունքային ներգործություն և խորապես հուզելով՝ այն ընթերցողին պարգևում է գեղագիտական բավականություն, նպաստում շրջակա իրականության ընկալմանը և վերաիմաստավորմանը, ձևավորում նրանց աշխարհընկալումը:

Գրական երկերի ընթերցման միջոցով կրտսեր դպրոցականը փորձում է երևակայությամբ ներթափանցել նկարագրված դեպքերի ու իրադարձությունների մեջ, ապրումակցել հերոսներին, և դրանց ազդեցությամբ աստիճանաբար սկսում է յուրացնել տարաբնույթ բարոյական հասկացություններ ու արժեքներ:

Ըստ այդմ էլ՝ գրական երկերի գեղագիտական և բարոյական արժերներն ընկալելու համար կարևորվում են հետևյալ դրույթները՝

ա. մտորել կարդացածի շուրջ,

բ. գնահատել նրանց արարքները,

գ. համեմատել իրենց կյանքը հերոսների կյանքի հետ,

դ. կատարել բարոյական չափանիշներին համապատասխան արարքներ:

Այս գործընթացում կարևոր է ուսուցչի աշխատանքը, մեթոդների ընտրությունը, որոնք դաստիարակչական և ուսուցողական մեծ արժեք ունեն: Գեղարվեստական գործերը միայն օգնում ու կողմնորոշում են ուսուցչին, թե ինչպես նպատակաուղղել աշխատանքը, որպեսզի երեխաների մեջ զգացմունքներ առաջանան, և ինչպես հղկեն դրանք: Իսկ, թե ինչպես հուզել աշակերտներին ստեղծագործությունների ընթերցման ժամանակ, պայմանավորված է ոչ միայն ուսուցչի հմտությամբ և գեղարվեստական ընթերցանությանը տիրապետելու կարողությամբ, այլև այն մեթոդներով ու սկզբունքներով, որոնցով առաջնորդվում է նա: Ուսուցիչը պետք է

այնպես կարդա, որ երեխայի աչքերը փայլեն, հուզմունքից շունչը պահի: Միայն այս ճանապարհով երեխան կկարողանա գնահատել ու վերլուծել բարոյական արժեքները՝ բարությունը, ազնվությունը, մեծահոգությունը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հանդուրժողականությունը և այլն: Ծահեկան է, որ աշակերտն ինքը կարողանա վերլուծել ընթերցած ստեղծագործությունը և սեփական եզրահանգումներ անել բարու և չարի, լավի ու վատի, ճշմարիտի ու սխալի մասին:

Կրտսեր դպրոցականների համար գեղարվեստական ստեղծագործություններն, Ուշինսկու բնութագրմամբ՝ այն պատուհանն է, որտեղից նրանք տեսնում են աշխարհը, ճանաչում ու սիրում են իրենց շրջապատող բնությունը, մարդկանց, ձևավորվում է ու զարգանում նրանց գեղարվեստական ճաշակը:

Այսպիսով՝ գրականությունն ու գրական ընթերցանությունը այն ակունքն են, որոնց միջոցով ձևավորվում են կրտսեր դպրոցականների հետաքրքրությունն ու սերը ընթերցանության նկատմամբ, հզորանում է բարոյական արժեքների ներգործության ուժը, ինչպես նաև գրական խոսքը խորությամբ հասկանալու կարողությունը: Արտահայտիչ ընթերցանությունը սովորեցնում է տեսնել ու զգալ գեղեցիկը, բարին, վեհը, վսեմն ու ազնիվը:

ԳԼՈՒԽ 2

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Ընթերցանության տեսակները և դրանց զարգացման հնարները

Ինչպես արդեն նշել ենք, տարրական դպրոցում մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ:

Կարդալու հմտությունը տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակն է, այն ձեռք է բերվում հաջորդական քայլերի հետևողական կիրառմամբ: Այն ձևավորվում է երեք փուլով՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված: Վերլուծական փուլում սկսնակ ընթերցողի ընթեցողական տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը, երրորդ փուլում սովորողներն ընթերցում են ամբողջական նախադասություններով: Այս փուլում աշակերտները, որպես կանոն սահուն կարդում են:

Ընթերցանության ուսուցումը չպետք է նույնացվի ընթերցանության հմտությունների զարգացման հետ: Վերջիններս որքան էլ կարևոր են մայրենիի ուսուցման այս փուլում, չեն կարող լիովին բավարարել ընթերցանության ուսուցման ժամանակակից պահանջները: Այն ժամանակ ընթերցանությունը ծառայեցնել հաղորդակցական տարրական հմտությունների (կարդալ, լսել, խոսել, գրել), մտավոր կարողությունների(վերլուծություն, ընդհանրացում, կոնկրետացում և այլն) զարգացմանը, անձի դաստիարակությանը և այլն: Ուստի կրտսեր դպրոցականների համար նախատեսված ընթերցանության նյութերը ծառայում են ոչ միայն ընթերցանության տեխնիկայի մշակմանն ու զարգացմանը (բարձրաձայն ու լուռ ընթերցելու կարողությունների, վարժ և արտահայտիչ ընթերցանության հմտությունների ձևավորում), այլ նաև կարդացածն ընկալելու և իմաստավորելու, հիմնական գաղափարն ու առանձին փաստեր դուրս բերելու, հերոսների վարքագիծը գնահատելու, դրանց շուրջ խորհրդածելու, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, դատողություններ անելու:

Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական և դասարանական: Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կա նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի

կետադրական ու առոգանական նշաններն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին: Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը, կարդալու տեմպը, ռիթմը, դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում: Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում: Հենց այս փուլում էլ անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե կետադրական կամ առոգանության որ նշանն ինչպես է կարդացվում: Եվ այդ կարողությունն աստիճանաբար զարգացնել մինչև երրորդ դասարանի վերջը: Գրաճանաչության այբբենական և հետայբբենական շրջաններում կրտսեր դպրոցականները ընթերցանության ժամանակ դժվարանում են, չեն կարողանում տարբերակել առոգանության նշանների հնչերանգը: Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է օգտագործել խաղի ընթացքում հնչած երկխոսությունները՝ բացատրելով հնչերանգը: Ապա պետք է պահանջել՝ կրկնել հրաման, բացականչություն, հարցում արտահայտող նախադասությունները: Այնուհետև երեխաների ուշադրությունը կենտրոնացվում է դրանցից յուրաքանչյուրի արտասանությանը: Այս կերպ գործնականորեն կարելի է յուրացնել տալ նաև բացականչության, հրաման, խնդրանք արտահայտող նախադասությունների հնչերանգը: Հետո նույն աշխատանքը պետք է կատարել նաև բնագրի վրա: Մենք առաջարկում ենք կիրառել նաև ՏՀ տեխնոլոգիաներ 5-7 րոպե ունկնդրել տալ գրական որևէ ստեղծագործություն՝ աշակերտների ուշադրությունը հրավիրելով հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների հնչերանգին ու արտասանությանը:

<u>2.2 Կարդալու որակական հատկանիշները</u>

- ճիշտ կամ անսխալ կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- հասկանալով կամ գիտակցելով կարդալ,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ :

ա) Ճիշտ կարդալ

«Առաջարկված բնագիրը ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը (այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքն ու թիվը, ժամանակը), երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ կարդալիս նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառի մեջ վանկերը և նախադասությունների մեջ բառերը ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան»:

բ) Սահուն կարդալ

Առաջարկված բնագիրը «սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը:

գ) Հասկանալով կարդալ

Հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը: Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է: Կարդացածը՝ հասկանալ նշանակում է տեքստի մտքերը ներհյուսել տվյալ թեմայի վերաբերյալ իր իմացությանը, հաղորդվող տեղեկությունը կիրառել գործնականում, ինչպես նաև կարդացածին սեփական մեկնաբանությունը տալ: Կարդալու ուսուցումը սկսվում է տարրական դպրոցից, որն ուսուցման հետագա օղակներում դառնում է միջոց: Կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակումը բարդ և աշխատատար գործ է և բավական ճիգ ու ջանք է պահանջում: Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, երբ ընթերցանության ժամանակ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսք գնալու: Կարդալու ընթացքում, երբ ընթերցողն անընդհատ ընթերցում է նյութը, այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է

իմաստավորել, հասկանալ իր ստացած տեղեկատվությունը: Արդյունքում ընթեցողը ոչ թե պասիվորեն ընկալում է նյութը, այլ այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել, հասկանալ իր ստացած տեղեկատվությունը: Արդյունքում ընթեցողը ոչ թե պասիվորեն ընկալում է այն, ինչ կարդում է, այլ նա իր վրա է վերցնում կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը:

դ) Արտահայտիչ կարդալ

Կարդալը արտահայտիչ է համարվում, այն ժամանակ միայն, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով ու փոփոխությամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ: Կարդալն արտահայտիչ է, եթե կարդացողը կարողանում է վերակենդանացնել գրական հայերենի արտասանության ճշտությունը, հստակությունն ու բարձրությունը, խոսքի քերականական, տրամաբանական ու հոգեբանական շեշտերն ու դադարները, ճիշտ է ընտրում կարդալու տեմպն ու հնչերանգը:

Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը:

ե) Արագ կարդալ

Կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորվել: Արագ կարդալու միջոցով կարճ ժամանակամիջոցում շատ տեղեկատվություն կարելի է ստանալ :

Հոգեբանների կարծիքով հասկանալով կարդալու համար ընթերցողը առաջին հերթին պետք է կարդա արագ: Արագ կարդալը հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող ամենակարևոր գործոններից է: Խոսքը լավ կարդալու մասին է, այսինքն՝ կարդալ խոսելու տեմպին համահունչ: Այդ հանգամանքը նրանք մեկնաբանում են որոշ տեսանկյուններից:

Ուսուցման տեսանկյունից: Եթե աշակերտը կարողանում է արագ կարդալ, իսկ միջին օղակում տնային հանձնարարությունները 5-8 էջ են կամ 6500 բառ, ապա 6500 : 60 = 107 րոպե: Մոտ 2 ժամ անհրաժեշտ է, որպեսզի նյութը կարդա զոնե մեկ անգամ: Իսկ չէ՞ որ պետք է այն կարդա 2-3 անգամ և պետք է կատարի այլ տնային հանձնարարություններ:

Զարգացման տեսանկյունից: Արագ կարդում են այն մարդիկ, որոնք շատ են կարդում: Գործընթացում զարգանում է գործնական հիշողությունը և ուշադրության կայունությունը: Այս երկու ցուցիչներից է կախված նաև ընթերցողի մտավոր աշխատունակությունը:

Դաստիարակության տեսանկյունից: Անառարկելի է, որ ընթերցողների դաստիարակությունը պայմանավորված է նրանց պարտավորություններից և զգայունակությունից : Եթե երեխան նախորդ դասարանում լավ չի սովորում, հաջորդ դասարանում ցածր է լինում նրա առաջադիմությունը: Փորձը ցույց է տվել, որ դասարանի սովորողների մեծամասնության մոտ միջակություն է տիրում: Նրանց համոզմամբ՝ սովորեն, չսովորեն՝ միջակություն կլինի: Ուրեմն՝ գերադասելի է չսովորելը: Եվ նման երեխաները բարձր դասարաններում չեն կարողանում ինքնուրույն տնային հանձնարարություններ կատարել:

Տնտեսական տեսանկյունից: Առաջին հայացքից թվում է, թե այն շատ հեռու է կրթական համակարգից: ԱՄՆ-ի շատ ձեռնարկություններում կառավարական աշխատանքի չեն ընդունում այն անձանց, ովքեր մեկ րոպեում չեն կարդում 400 բառ: Համարվում է, որ նա «կխորտակվի թղթերի մեջ:

Գաղափարա–քաղաքական տեսանկյունից: Եթե 6 թերթից բաղկացած թերթում կա մոտ 40000 բառ և կարդացողն էլ կարդում է րոպեում 80 բառ, այն կարդալու համար անհրաժեշտ է 500 րոպե, կամ՝ մոտ 8 ժամ:

Թվում է՝ անգրագիտություն չկա, սակայն կիսագրագիտությունն էլ ոչ մի բանով լավ չէ: Ինչո՞ւ են երեխաները սկսել վատ կարդալ:

Մեր՝ գիտատեխնիկական առաջընթացի ժամանակաշրջանում, որտեղ թագավորում են հեռուստատեսությունը, համակարգիչները տեսախաղերը, երեխաները կորցրել են հետաքրքրությունը ընթերցանության հանդեպ: Սակայն ոչ միայն երեխաները, այլ նաև մեծահասակները չեն ուզում կարդալ:

Գիրքը հասկանալով կարդալու համար անհրաժեշտ է ընթերցել ամենաքիչը երեք անգամ, եթե գիրքն ունի հատուկ ուշադրության կարիք: Երեք անգամ ասելով՝ նկատի ունենք, որ գոյություն ունի գիրք կարդալու երեք եղանակ, որոնք պետք է անպայման կիրառել: Գործողությունների միասնական համակարգ մշակելու համար պետք է փորձ ձեռք բերել, ինչը կօգնի բազմաթիվ քայլերի միավորումը կատարել գործողությունների առանձնացված համակարգով: Սկզբնական շրջանում դժվար կլինի միավորել գործունեության տարբեր

հայեցակետերը, ինչպես խճանկարի տարբեր հատվածները մեկ ամբողջության մեջ: Նրանցից յուրաքանչյուրը պահանջում է բացառիկ ուշադրություն և ջանք:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշակի կանոնների վրա, որոնք բաժանվում են երեք հիմնական խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը համապատասխանում է գրքեր կարդալու եղանակներից մեկին: Ինչո՞ւ է անհրաժեշտ երեք ընթերցում: Առաջին հերթին պետք է յուրացնել այն, ինչը ներկայացվում է որպես գիտելիք: Հետո պետք է որոշել՝ ընդունելի է այդ գիտելիքը: Այլ խոսքերով՝ առաջին խնդիրն այն է, որ հասկանանք գիրքը, իսկ երկրորդը՝ որ նրան մոտենանք քննադատորեն: Հետագայում կհասկանանք, որ դրանք ըստ էության տարբերվում են: Իմացության գործընթացը նույնպես կարելի է բաժանել մասերի: Գիրքը հասկանալու համար պետք է ընդունել այն որպես մեկ կառուցվածքային ամբողջություն, իսկ հետո՝ լեզվական և իմաստային միավորների համակարգով օբյեկտ:

Այսպես՝ գոյություն ունի ընթերցանության տարբեր եղանակ.

I. Կառուցվածքային կամ վերլուծական եղանակ: Այս դեպքում ընթերցողը շարժվում է ամբողջից դեպի մասնավոր:

II. Վերաներկայացման կամ համադրական եղանակ: Այստեղ ընթերցողը շարժվում է մասնավորից դեպի ամբողջը:

III. Քննադատական կամ գնահատող եղանակ: Կարդացողը գնահատում է հեղինակին և որոշում՝ համաձա յն է ինքը նրա տեսակետին:

Այս երեք եղանակներից ամեն մեկը ենթադրում է մի քանի գործողությունների կատարում, իսկ դա նշանակում է հաշվի առնել մի քանի կանոններ:

2.3 Արտահայտիչ խոսքի ձևավորումը ինքնուրույն ընթերցանության և արտադասարանական աշխատանքների ընթացքում

Նախկինում եղած «Արտադասարանական ընթերցանություն» առարկայի փոխարեն այժմ քառամյա կրտսեր դպրոցի մայրենիի դասընթացի նոր ուսումնական պլանով նախատեսված է «ինքնուրույն ընթերցանություն» առարկան, որին հատկացված են առանձին դասաժամեր՝ շաբաթական մեկ պարապունք: Առաջադրված են որոշակի պահանջներ աշակերտների ինքնուրույն ընթերցանության՝ կազմակերպման, ղեկավարման և ստուգման ուղղությամբ: Այդ դասընթացը համարվում է մայրենիի դասի կարևոր լրացում, որն ունի որոշակի նպատակներ.

ա. Սովորողների ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և ընթերցասիրության սերմանում

բ. գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու և վերլուծելու կարողության զարգացում,

գ. ձեռք բերված գիտելիքների ընդլայնում և խորացում,

դ. ճանաչողական գիտելիքների ձեռքբերում,

ե.կրտսեր դպրոցականի բարոյականային արժեքների և գրական ճաշակի ձևավորում և այլն:

Հաշվի առնելով առարկայական չափորոշիչներով նախատեսված այս պահանջները՝ այսօր հրապարակի վրա են նաև «Գրական ունկնդրում և խոսք» (1-ին դասարան), «Ինքնուրույն ընթերցանության նյութեր» 2-րդ, 3-րդ, և 4-րդ դասարանների համար նախատեսված ձեռնարկները, որոնց օգնությամբ դասընթացը առավել հետաքրքիր ու բովանդակալից է դարձել: Այս ձեռնարկներում բնագրերը ներկայացված են տարբեր թեմատիկ խմբերով, ներառված են բազմաբնույթ առաջադրաքներ՝ պաստառի պատրաստում. ցերեկույթի կազմակերպում, դերային խաղերով գրական ստեղծագործության ներկայացում և այլն, որոնք բացի ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելուց, մեծապես նպաստում են նաև աշակերտների արտահայտիչ կարդալու կարողության զարգացմանը: Աշխատանքները նախատեսված են և՛ տանը, և՛ դասարանում կատարելու համար:

Ինչպես իրավամբ նկատում է Ռ. Խարազյանը՝ «արտադասարանային» եզրույթն առաջին հերթին նշանակում է, որ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Մայրենիի դասագործընթացում սահմանափակ են ժամաքանակն ու պայմանները, որի հետևանքով միշտ չէ, որ հնարավոր է լինում լիարժեք ուշադրություն տրամադրել աշակերտների արտահայտիչ խոսքին և ընթերցանությանը, ուստի այն լրացվում է ինքնուրույն ընթերցանության և արտադասարանական աշխատանքների ընթացքում:

Ինքնուրույն ընթերցանության դասն իր կարևոր տեղն ունի ոչ միայն դասարանային, այլև ընդհանուր առմամբ, ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում: Ինչպես մայրենիի, այնպես էլ ինքնուրույն ընթերցանության դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու

հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Սա առավել ազատ դասագործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները:

«Ինքնուրույն ընթերցանության նյութեր» ձեռնարկներում ընդգրկված արձակ և չափածո գրական ստեղծագործությունները արծարծում են բազմապիսի թեմաներ, որոնք հնարավորություն են տալիս այդ դասերի ընթացքում տարամակարդակ աշխատանքներ կազմակերպել՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները

Արտադասարանական պարապունքների անցկացման ձևերից են դաս ցերեկույթները, գրական – երաժշտական միջոցառումները, արվեստի վարպետների, նշանավոր՝ արտիստների ու ասմունքողների ձայնագրությունների՝ ունկնդրումները ՏՀՏ միջոցներով, ինչպես նաև գեղարվեստական ցուցադրությունները և այլն, որոնք երեխաների համար գեղեցիկ խոսքի ու արտահայտիչ ընթերցանության օրինակ կարող են լինել: Դրանք ունեն նաև ուսուցողական ու դաստիարակչական մեծ նշանակություն, ոգևորում են սովորողներին և նպաստում արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը: Այդ դասերն առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը կարող է դիմել դերային խաղերին՝ բեմականացնելով որևէ արձակ կամ չափածո ստեղծագործություն: Դերային կերպարանափոխությունը, ներթափանցումը հերոսի կերպարի մեջ աշակերտներից յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում կատարել իր հոգուն հարազատ ստեղծագործական աշխատանք: Նմանատիպ աշխատանքները ոգևորում են երեխաներին, նպաստում նրանց ինքնուրույն ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանության դասը պետք է խթանի աշակերտների ինքնուրույն մտավոր գործունեությունը և զարգացնի նրանց ստեղծագործական ունակությունները:

հիմնական իմաստ, ընդլայնված ընթերցանություն, սահմանափակ ընթերցաս

10 հետաքրքիր փաստ ընթերցանության մասին

1. Մաքսիմ Գորկին մեկ րոպեում կարդում էր 4000 բառ:

2. Արագ ընթերցանության դեպքում աչքերը ավելի քիչ են հոգնում, քան դանդաղ ընթերցանության դեպքում:

3. Ի. Ստալինը օրական կարդում էր 400 էջ՝ համարելով դա նվազագույն նորմա:

4. Թոմաս Էդիսոնը կարդում էր 2-3 տողը միանգամից, շնորհիվ առավելագույն կենտրոնացման՝ մտապահում էր էջերով տեքստեր:

5. Ավանդական ընթերցանության դեպքում ընկալման մակարդակը 60 տոկոս է, արագ ընթերցանության դեպքում՝ 80 տոկոս:

6. Բալզակը 200 էջանոց վեպը կարդում էր 30 րոպեում:

7. Ընթերցանության ժամանակ ընթերցողի աչքերը, նայելով տարբեր տառերին, հաղորդում են տարբեր պատկերներ: Իսկ ուղեղը դրանք միավորում է մեկ պատկերում:

8. Ոմն Է. Գաոնը բառացիորեն հիշում էր իր ընթերցած 2500 գրքերը:

9. Նապոլեոնը մեկ րոպեում կարդում էր 2000 բառ:

10.Ընթերցանության միջին կարողությամբ մարդու աչքերը մեկ գրքային տողի վրա դադար է վերցնում 12-16 անգամ, արագ կարդացողի աչքերը՝ 2-4 անգամ:

Օրինակելի դասի պլան

Դասարանը - IV

Առարկան - Մայրենի

Թեմա - Քաջ Նազարը

Նպատակ - Աշակերտները՝

- Կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տարրերը
- Կհարստացնեն իրենց մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով
- Ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ
- Հեքիաթի միջոցով կարմատավորվեն բարոյական, մարդասիրական հատկանիշները
- Կկարողանան գործնականում տարբերել հրապատում և հրաշապատում հեքիաթները
- Կզարգացնեն հասկանալով կարդալու, դեպքերի միջև կապեր գտնելու և ընկալելու կարողությունները
- Կկառուցեն նկարագրական գեղեցիկ խոսք
- Կամրակայեն առարկա ցույց տվող բառերի մասին ունեցած գիտելիքները

Կահավորում - «Հեքիաթ» պաստառը, փուչիկներ, որոնց մեջ կան բառեր

Գործածվող մեթոդները – խաղ՝ «կռահենք թաքնված բառը», «Ով արագ կկատարի», ակրոստիքոս, մտագրոհ մեթոդներ

Ընթացքը – Խթանում. Նոր ուսումնասիրվող թեման անմիջապես չի ազդարարվում: «Կռահենք թաքնված բառը», խաղի միջոցով աշակերտները պետք է կռահեն թաքնված բառը: Նրանք պատասխանելու են նախապես պատրաստված հարցերին՝ գուշակելով այդ բառի տառերը:

?- Հեքիաթի ո՞ր հերոսն է անբան, աշխատել չի սիրում և ամբողջ օրը նստած ծամոն է ծամում:

X- **Հ**ուռին

?- Այն ի՞նչն է, որ քնած ժամանակ ենք տեսնում

X- **Ե**րազ

?- Անհաղթ հերոս, որ մին զարկում է, ջարդում հազար

X- **Ք**աջ Նազար

?- Վինի Թուխի ընկեր իշուկի անունը

X-**Իա**

?- Անդերսենի հեքիաթի հերոս, որը մեծանում և դառնում է գեղեցիկ կարապ

X- **Ա**նճոռնի ճուտիկը

?- Սպիտակաձյունիկի յոթ ընկերները

X-**Ը**զուկները

Պատասխանների 1-ին տառերը երեխաները գրում են գրատախտակին և ստացվում է **Հեքիաթ** բառը:Հանձնարարվում է մտագրոհի մեթոդով թվել այն ամենը ինչ զգում են կամ գիտեն Քաջ Նազարի մասին:



Իմաստի ընկալում- հանձնարարվում է որ աշակերտները ներկայացնեն հեքիաթի մասին նախօրոք սովորածը, կարդալ «Քաջ Նազար» հեքիաթը: Ինչպես է սկսվում, ինչպես է վերջանում, մեկնաբանել անհասկանալի արտահայտությունները, անդրադառնալ ժողովրդական, բարբառային բառերին: Հեքիաթը կարդալ դերերով և ամենակարևորը ընդգծել Նազարի հատկանիշները, մասնավորապես՝ վախկոտությունը:

Կշռադատում- Աշակերտները պետք է ձևավորեն հեքիաթի հիմնական միտքը, կարծիք հայտնեն վերնագրի վերաբերյալ, կարող են նոր վերնագիր առաջարկել: Այս ամենից ելնելով ուսուցիչը կարող է իմանալ, թե արդյո՞ք հասավ ցանալի արդյունքի, երեխաները ճիշտ ընկալեցին հեքիաթը, թե ոչ: Հարցերի միջոցով ամփոփել դասը և իմանալով, որ հասել է ցանկալի արդյունքի, ուսուցչուհին ավարտում է դասը՝ հանձնարարելով տնային աշխատանք:

Եզրակացություն

Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. «Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝մարմնի»: Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերի հատուկ տաղ: Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը: Անգամ գիտնականներն են ապացուցել, թե ինչ կարևորություն ունի ընթերցանությունը մարդու համար: Այն ոչ միայն օգնում է, որպեսզի դառնաք խելացի, այլ նաև կարող է, ըստ էության, բարելավել ձեր ուղեղի աշխատանքը: Ինչպես օրինակ վազքը բարելավում է ձեր սրտանոթային համակարգի աշխատանքը, պարբերական ընթերցանությունը բարելավում է հիշողությունը՝ մարզելով ձեր ուղեղը: Տարիքի հետ հիշողությունն ու ուղեղի աշխատանքը թերանում են, սակայն ընթերցանությունը օգնում է դանդաղեցնել այդ գործընթացը՝ ավելի սթափ պահելով միտքը: Ուղեղի հաճախակի վարժանքները կարող են իջեցնել ուղեղի ծերացումը շուրջ 32 տոկոսով:

Չկա ավելի լավ բան, քան հին գրքերի հոտը կամ նորի հիմքի ճեղքվածքը. գումարած՝ դուք երբեք չունեք մարտկոցների հետ կապված խնդիր): Եվ ստացվում է, որ այս ամենը օգտակար է նաև ձեր առողջության և երջանկության համար:

Որքան շատ եք կարդում, այդքան ավելի շատ բաներ եք իմանում: Լավ գիրքը բացում է ձեր առջև մի ամբողջ գիտելիքների աշխարհ՝ սկսած շատ երիտասարդ տարիքից: Գեղարվեստական գրականությունը օգնում է իր ընթերցողներին հասկանալ, թե ինչ են մտածում մյուսները՝ կարդալով այլ մարդկանց հոգեաշխարհի մասին: Ազդեցությունը շատ ավելի մեծ է նրանց համար, ովքեր կարդում են գեղարվեստական գրականություն, ի տարբերություն նրանց, ովքեր կարդում են մասնագիտական գրականություն:

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ» 2001,
2. Գյուլամիրյան Ջ., Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները, «Նախաշավիղ» N3-4, 2001
3. Գյուլամիրյան Ջ., հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր,. «Զանգակ-97», 2009
4. Դավթյան Մ., Ընթերցողական հմտությունների ձևավորումը դպրոցի հույժ կարևոր խնդիրներից է, «Մանկավարժություն», 2006, 3-4,
5. "Poqrik Ishkhan" Educational Complex ″ Փոքրիկ Իշխան″ կրթահամալիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....1-2

Գլուխ 1

Ընթերցանության կարողությունների զարգացում

1.1Տարրական դպրոցում ընթերցանությանը ներկայացվող պետական չափորոշիչների պահանջները.....3-5

1.2 Ընթերցանությունը՝ որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց.....5-7

Գլուխ 2

Կրտսեր դպրոցականների ընթերցելու կարողությունների ձևավորումը

2.1 Ընթերցանության տեսակները և դրանց զարգացման հնարները.....8-9

2.2 Կարդալու որակական հատկանիշները.....9-13

2.3 Արտահայտիչ խոսքի ձևավորումը ինքնուրույն ընթերցանության և արտադասարանական աշխատանքների ընթացքում.....13-15

10 հետաքրքիր փաստ ընթերցանության մասին……16

Օրինակելի դասի պլան.....17-18

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

.